ը) Եւ սոյնպէս յառաջ քան զգնալ կաթողիկոսին Փիլիպպոսի յերուսաղէմ, թուղթ ուղարկեաց յերուսաղէմ Աստուածատուր վարդապետին և Խաչատուր վարդապետին թէ Զարարողութիւն եկեղեցւոյ՝ զէջմիածնին արասցէք, որ գայ նա և այնպէս գտցէ։

Մայիս ամիս օր Շաբաթ։

Թ–ին՝ օր Կիրակի, ըստակ հազիւ գտան ԲՌ զուռուշ և տարան առ փաշան վասն շինութեան եկեղեցոյն, և եղև զի տուաւ հրաման շինելոյ, քանզի ինքն այր բարեպաշտ էր և մի այլ հրաման ետ Ըստամպոլ էֆէնտիսուն թէ Երթաս քէշվ անես զեկեղեցին։ Եւ յայսմ ժամու Պուռնազ հօճազատէ անուանեալ չար թշնամին, որ էր յայնմ ամի զազիէսքէր Անատոլոյ, որ ժամանակաւ ի Պրուսա քաղաք զատի եղեալ և զեկեղեցին Հայոց քակեալ, և այժմ զայս բանն աւիրեալ, և ոչ շինեցաւ. և այս՝ վասն մեր ծովացեալ մեղաց մերոց։

ԻԷ–ին՝ օր Եշի Համբարձում։

Յունիս ամիս օր Գշի։

Զ–ին օր Կիրակի՝ սուրբ Հոգոյ գալուստ։

ԺԷ–ին օր Եշի մանզուլ արարին զԿուռնի Մէհէմէտ փաշայ և եդին վէզիր զՄըսրայ մանզուլ եղած Ահմէտ փաշան, որ էր քէհեա կտրատած Ահմէտ փաշային։

Եւ օրս Եղիազար վարդապետն գնաց Զ նաւով, հանդերձ իշխանօք քաղաքիս՝ ի դէմ Փիլիպպոս կաթողիկոսին և եդ ի տեղն իւր զհարազատն իմ զՏէր Մարտիրոս անուանեալն, որ ի ժամանակէ՝ յորում այսր եկն վարդապետն, յայնմ օրէ ծանօթացան միմեանց և ոչ հեռացաւ ի նմանէ, այլ հանապազ կանխեալ կայր առ նա։

Եւ ի Շաբաթիս (19 Յ–ին) եկն վարդապետն։